ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հոկտեմբերի 2026 թվականի N 122-Ա

ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու թիվ 10 նստաշրջանի՝ 2026 թվականի հոկտեմբերի 9-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի Գետափ գյուղի 28-րդ փողոցից սկսվող փողոցը և այդ փողոցից սկսվող փակուղին համարակալելու մասին:

3) Եղեգնաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի մուտքերի դռների, ընդհանուր օգտագործման միջանցքների պատուհանների և լուսավորության համակարգի փոխարինման նպատակային ծրագիրը հաստատելու մասին:

4) Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի ընթացքի մասին:

5) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին:

6) Մելանյա Արգամի Դովլաթյանին Եղեգնաձոր համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:

7) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ
ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ
ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 09
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2026 թվականի N 123-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ և 33-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հունվարի 7-ի թիվ 03-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Ավելացնել գործառնական դասակարգման 04.09.01 (տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)) ոլորտի (տող 2491), տնտեսագիտական դասակարգման 8411 (հողի իրացումից մուտքեր) հոդվածին 143 790 000 (մեկ հարյուր քառասուներեք միլիոն յոթ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ և այն նպատակաուղղել ֆոնդային բյուջեի՝

ա. գործառնական դասակարգման 01.06.01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5129 (այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածին՝ 1 420 000 (մեկ միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր համայնքի բոլոր բնակավայրերի մանկապարտեզների պահեստային մասերի և Գլաձոր բնակավայրի

կոնֆերենս դահլիճի օդորակիչների ձեքբերման համար, 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին՝ 65 400 000 (վաթսունհինգ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր համայնքի մարզադպրոցի տանիքի հիմնանորգման աշխատանքների, Կամոյի 2Ա բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների, բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքերի բարեկարգման աշխատանքների և Մոմիկի անվան զբոսայգու վերանորոգման աշխատանքների ֆինանսավորման համար, 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին՝ 17 320 000 (տասնյոթ միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր համայնքում գազատարի կառուցման, կանգառների տեղադրման և «Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շինարարության տեխնիկական հսկողության աշխատանքների ֆինանսավորման համար, 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին՝ 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար,

բ. գործառնական դասակարգման 06.03.01 (ջրամատակարարում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին՝ 12 300 000 (տասներկու միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր համայնքում կոյուղու կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ֆինանսավորման համար, 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին՝ 15 850 000 ՀՀ դրամ՝ Գլաձոր բնակավայրում կապտաժի կառուցման համար,

գ. գործառնական դասակարգման 06.04.01 (փողոցների լուսավորում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին 30 000 000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ՝ համայնքի բնակավայրերում լուսավորության ցանցերի կառուցման ֆինանսավորման համար.

2) Պակասեցնել՝ գործառնական դասակարգման 11.01.02 (պահուստային ֆոնդ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից 7 725 000 (յոթ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ և այն ավելացնել՝

ա. գործառնական դասակարգման 01.06.01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) ոլորտի տնտեսական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի ծառայություններ) հոդվածին՝ 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ՝ ընթացիկ ծառայությունների մատուցման ֆինանսավորման համար, 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածին՝ 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ մասնագիտական ծառայությունների ֆինանսավորման համար և 4823 (պարտադիր վճարներ) հոդվածին՝ 1 025 000 (մեկ միլիոն քսանհինգ հազար) ՀՀ դրամ կադաստրային գործարքների վճարներն իրականցնելու համար,

բ. գործառնական դասակարգման 04.02.01 (գյուղատնտեսություն) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի ծառայություններ) հոդվածներին՝ 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ ծառերի էտման աշխատանքների ֆինանսավորման համար,

գ. գործառնական դասակարգման 04.05.01 (ճանապարհային տրանսպորտ) ոլորտի 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ համայնքային նշանակության ճանապարհների փոսալցման աշխատանքների ֆինանսավորման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ
ՇՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ
ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 09
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հոկտեմբերի 2026 թվականի N 124-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԳՅՈՒՂԻ 28-ՐԴ ՓՈՂՈՑԻՑ ՍԿՍՎՈՂ ՓՈՂՈՑԸ ԵՎ ԱՅԴ ՓՈՂՈՑԻՑ ՍԿՍՎՈՂ ՓԱԿՈՒՂԻՆ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետը, Գետափ գյուղի երկու փողոցների մասով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի Գետափ գյուղի՝

1) 28-րդ փողոցից սկսվող փողոցը համարակալել որպես՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Գետափ, 29-րդ փողոց.

2) 29-րդ փողոցից սկսվող փողոցը համարակալել որպես՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Գետափ, 29-րդ փողոց, 1-ին փակուղի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում էլեկտրոնային եղանակով Կադաստրի կոմիտեի հասցեների միասնական ռեեստրի տեղեկատվական համակարգ ներբեռնելու պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ
ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ
ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 09
ք. Եղեգնաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2026 թվականի N 125-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԴՌՆԵՐԻ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋԱՆՑՔՆԵՐԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 42-րդ կետերով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝

1) Եղեգնաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի մուտքերի դռների, ընդհանուր օգտագործման միջանցքների պատուհանների և լուսավորության համակարգի փոխարինման նպատակային ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված շենքերի ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ծրագրի ֆինանսավորումն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով, այդ նպատակով համայնքի բյուջում նախատեսել համապատասխան ֆինանսական միջոցներ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ
ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ
ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 09
ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2026 թվականի հոկտեմբերի 9-ի N 125-Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԴՌՆԵՐԻ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋԱՆՑՔՆԵՐԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի (այսուհետ՝ Համայնք) բազմաբնակարան շենքերի մուտքերի դռների, ընդհանուր օգտագործման միջանցքների պատուհանների և լուսավորության համակարգի փոխարինման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակաուղղված է Համայնքի բազմաբնակարան շենքերի օգտագործման արդյունավետության բարձրացմանը, համայնքի անշարժ գույքի ֆոնդի կառավարման՝ տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում համայնքային միասնական քաղաքականության սահմանմանը, Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը և Համայնքի զարգացման ծրագրով սահմանված խնդիրների լուծմանը:

2. Ծրագրի իրականացման հիմքում դրվել են Համայնքի բազմաբնակարան շենքերի նպատակային և ծրագրային կառավարման հետ կապված հարաբերությունները, ներառյալ՝ շենքերի պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև՝ Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրների լուծումը:

II. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

3. Համայնքում առկա բազմաբնակարան բնակելի շենքերը կառուցվել և շահագործման են հանձնվել տասնամյակներ առաջ: Ժամանակի ընթացքում շենքերի ընդհանուր օգտագործման տարածքները՝ մուտքերը, աստիճանավանդակները, միջանցքները և ներքին ինժեներական ենթակառուցվածքները, չեն ենթարկվել համակարգված հիմնանորոգման, ինչի հետևանքով ներկայումս գտնվում են ոչ բարեկարգ վիճակում:

4. Սույն ծրագրի նպատակն է բարձրացնել Համայնքի բազմաբնակարան շենքերի բնակիչների կենսապայմանների հարմարավետությունը, ապահովել շենքերի անվտանգությունը և բարելավել արտաքին ու ներքին տեսքը:

III. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

5. Մուտքերի հին դռների ապամոնտաժում և նոր դռների տեղադրում:

6. Մուտքերի դռների փականների, բռնակների և անհրաժեշտ հարակից պարագաների տեղադրում:

7. Ընդհանուր օգտագործման միջանցքների և աստիճանավանդակների հին պատուհանների ապամոնտաժում և նոր պատուհանների տեղադրում:

8. Դռների և պատուհանների տեղադրման արդյունքում անհրաժեշտ վերականգնման և հարդարման աշխատանքներ:

IV. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

9. Համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

1) բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղները, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներն ու տարածքները, շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը, որոնք օրենքով նախատեսված կարգով չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն:

10. Օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածների համաձայն՝

1) Ընդհանուր բաժնային սեփականության սեփականատերերի պարտականությունը այդ սեփականությունն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով պահպանելն ու շահագործելն է.

2) Ընդհանուր բաժնային սեփականության յուրաքանչյուր սեփականատեր պարտավոր է իր բաժնին համաչափորեն մասնակցել պարտադիր նորմերի պահանջների կատարմանն ուղղված ծախսերին, հարկերին, տուրքերին և մյուս վճարներին, ինչպես նաև գույքի պահպանման և շահագործման այլ ծախսերին.

3) Շինության սեփականատերերը պարտավոր են իրականացնել ընդհանուր բաժնային սեփականության պահպանման այն պահանջները և պարտադիր միջոցառումներն ու աշխատանքները (այսուհետ՝ պարտադիր նորմեր), որոնց չիրականացումը կարող է ուղղակի վտանգ ներկայացնել ընդհանուր բաժնային սեփականությանը, շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին.

11. Ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմինը շենքերի սեփականատերերի ժողովն է, որին պատկանում է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բնագավառում ցանկացած հարցի լուծման իրավունքը, բացառությամբ այն հարցերի, որոնք, Օրենքի համաձայն, համարվում են կառավարման մարմնի բացառիկ լիազորությունը:

12. Ժողովը հրավիրվում է ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ: Ժողով հրավիրելու իրավունք ունեն շինության յուրաքանչյուր սեփականատեր կամ շենքի կառավարման մարմինը: Շենքի կառավարման մարմին ընտրելու կամ լիազորությունները դադարեցնելու համար ժողով հրավիրվում է շենքի սեփականատերերի մեկ երրորդի կամ Համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ:

13. Ժողովի կողմից Օրենքով նախատեսված՝ իր լիազորությունների սահմաններում և համապատասխան ձայների առկայությամբ ընդունված որոշումը պարտադիր է բազմաբնակարան շենքի շինությունների բոլոր սեփականատերերի համար, այդ թվում՝ նրանց, ովքեր, անկախ պատճառներից, չեն մասնակցել քվեարկությանը կամ դեմ են քվեարկել որոշմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններս պատշաճ ծանուցված չեն եղել, և պատշաճ ծանուցված լինելու դեպքում նրանց քվեարկությամբ այդ որոշումը կարող էր չընդունվել:

14. Ժողովի որոշումները կարող են ընդունվել ժողովի գումարման, հարցման (հեռակա կարգով քվեարկության), ինչպես նաև իրազեկման միջոցով:

15. Ժողովի լիազորություններն են՝

1) բազմաբնակարան շենքի կառավարման ձևի, կառավարման մարմնի ընտրությունը.

2) բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի լիազորությունների դադարեցումը.

3) Օրենքով նախատեսված պարտադիր նորմերի իրականացումից բացի, կառավարման մարմնին տրվող այլ լիազորությունների ցանկի հաստատումը.

4) բազմաբնակարան շենքի արդիականացմանն ուղղված աշխատանքների և միջոցառումների իրականացման նպատակով փոխառության կամ վարկային պայմանագրերի կնքման, ինչպես նաև խոշոր գործարքների կնքման համաձայնեցումը.

5) բազմաբնակարան շենքի արդիականացմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքների և միջոցառումների իրականացման մասին որոշումների ընդունումը.

6) գույքային իրավունքներ (օգտագործման, վարձակալության և այլն) ձեռք բերելու վերաբերյալ գործարքների մասին որոշումների ընդունումը.

7) ընդհանուր բաժնային սեփականության վրա գովազդ տեղադրելու կամ սեփականությունն այլ կերպ առևտրային նպատակներով օգտագործելու, իրազեկելու և ծանուցելու համար նախատեսված տեղի մասին որոշման ընդունումը.

8) սեփականատերերից գանձվող՝ սույն օրենքով սահմանված պարտադիր և այլ վճարների չափի և վճարման ժամկետների սահմանումը.

9) շենքի բնակիչների կողմից ընդհանուր բաժնային սեփականությունից օգտվելու կարգի սահմանումը.

10) շենքի բնակիչների ընդհանուր բաժնային սեփականությունն օգտագործելու կարգի սահմանումը.

11) շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման տարեկան բյուջեի հաստատումը.

12) բյուջեի միջոցների հաշվին կառավարման մարմնի գործունեության աուդիտի իրականացումը.

13) ընդհանուր բաժնային սեփականության կառավարման հարցերով այլ որոշումների կայացումը, այդ թվում՝ կոմունալ ծառայություններ մատուցողների հետ շենքի կառավարման մարմնի՝ պայմանագրեր կնքելու հարցերը:

16. Ծրագրի իրականացման համար ֆինանսավորումը կատարվելու է համայնքի միջոցներով և բնակիչների կողմից բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի անվամբ (յուրաքանչյուր շենքի համար առանձին) այդ նպատակով բացված բանկային հաշվին փոխանցված ֆինանսական միջոցներից՝ յուրաքանչյուր տարի, ըստ անհրաժեշտության:

17. Բնակիչների կողմից ֆինանսական մասնակցության չափը որոշվում է Համայնքի ավագանու կողմից յուրաքանչյուր տարի՝ որպես տեղական վճար, որը ենթակա է վճարման բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի անվամբ այդ նպատակով բացված բանկային հաշվին յուրաքանչյուր ամիս:

18. Համայնքի ֆինանսական մասնակցությունը կկազմի աշխատանքների նախահաշվային արժեքի և բնակիչների կողմից իրականացված վճարների ընդհանուր տարբերությունը:

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2026 թվականի հունվարի 9-ի N 125-Լ որոշման

Ց Ա Ն Կ

Եղեգնաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի

ՀՀ	Բնակավայրը	Շենքի հասցեն	Հաշվի համարը	Արժույթ
1	քաղաք Եղեգնաձոր	Շահումյան19	900355003501 (1100)	AMD
2	քաղաք Եղեգնաձոր	Շահումյան15	900355003519 (1100)	AMD
3	քաղաք Եղեգնաձոր	Սպանդարյան 2	900355003527 (1100)	AMD
4	քաղաք Եղեգնաձոր	Միկոյան 14	900355003535 (1100)	AMD
5	քաղաք Եղեգնաձոր	Միկոյան 16	900355003543 (1100)	AMD
6	քաղաք Եղեգնաձոր	Միկոյան 13	900355003550 (1100)	AMD
7	քաղաք Եղեգնաձոր	Միկոյան 5	900355003568 (1100)	AMD
8	քաղաք Եղեգնաձոր	Միկոյան 3	900355003576 (1100)	AMD
9	քաղաք Եղեգնաձոր	Միկոյան 11	900355003584 (1100)	AMD
10	քաղաք Եղեգնաձոր	Նարեկացի 3	900355003592 (1100)	AMD
11	քաղաք Եղեգնաձոր	Արսենյան 5	900355003600 (1100)	AMD
12	քաղաք Եղեգնաձոր	Նարեկացի 6	900355003618 (1100)	AMD
13	քաղաք Եղեգնաձոր	Մոմիկի 2	900355003626 (1100)	AMD
14	քաղաք Եղեգնաձոր	Մոմիկի 6	900355003634 (1100)	AMD
15	քաղաք Եղեգնաձոր	Միկոյան15	900355003642 (1100)	AMD
16	քաղաք Եղեգնաձոր	Արսենյան 2	900355003659 (1100)	AMD
17	քաղաք Եղեգնաձոր	Արսենյան 4	900355003667 (1100)	AMD
18	քաղաք Եղեգնաձոր	Միկոյան10	900355003675 (1100)	AMD
19	քաղաք Եղեգնաձոր	Միկոյան12	900355003683 (1100)	AMD
20	քաղաք Եղեգնաձոր	Սևակի 5	900355003691 (1100)	AMD
21	քաղաք Եղեգնաձոր	Սևակի 1	900355003709 (1100)	AMD
22	քաղաք Եղեգնաձոր	Սևակի 3	900355003717 (1100)	AMD
23	քաղաք Եղեգնաձոր	Անդրանիկի 19	900355003725 (1100)	AMD
24	քաղաք Եղեգնաձոր	Անդրանիկի 17	900355003733 (1100)	AMD
25	քաղաք Եղեգնաձոր	Անդրանիկի 12	900355003741 (1100)	AMD
26	քաղաք Եղեգնաձոր	Արսենյան 9	900355003758 (1100)	AMD
27	քաղաք Եղեգնաձոր	Միկոյան 22	900355003766 (1100)	AMD
28	քաղաք Եղեգնաձոր	Միկոյան 9Ա	900355003774 (1100)	AMD
29	քաղաք Եղեգնաձոր	Մոմիկի 4	900355003782 (1100)	AMD
30	քաղաք Եղեգնաձոր	Մոմիկի 8	900355003790 (1100)	AMD
31	քաղաք Եղեգնաձոր	Սևակի 2	900355003808 (1100)	AMD
32	քաղաք Եղեգնաձոր	Կամոյի 2Ա	900355003816 (1100)	AMD
33	քաղաք Եղեգնաձոր	Կամոյի 2	900355003824 (1100)	AMD
34	քաղաք Եղեգնաձոր	Անդրանիկի 3	900355003832 (1100)	AMD
35	քաղաք Եղեգնաձոր	Երևանյան խճ.7	900355003840 (1100)	AMD
36	քաղաք Եղեգնաձոր	Արսենյան 31	900355003857 (1100)	AMD
37	քաղաք Եղեգնաձոր	Վ. Գևորգյան 2/2	900355003865 (1100)	AMD
38	քաղաք Եղեգնաձոր	Նարեկացի 3/1	900355003873 (1100)	AMD

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2026 թվականի N 126-Լ

ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի տարեկան բյուջեի 3-րդ եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ
ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ
ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 09
ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2026 թվականի հոկտեմբերի 9-ի N 126-Լ որոշման

Եկամտային մաս.

հազ.դրամ

Եկամտատեսակ	Նախատեսված /3-րդ եռամսյակ/	Կատարողական /3-րդ եռամսյակ/	Կատ. տոկոս
Անշարժ գույքի հարկ	23947.5	43264.7	180.7
Գույքահարկ փոխադրամիջոցներից	66888	68167.3	101.9
Տեղական տուրքեր	6350	13798.5	217.3
Ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ	9750	9743.5	99.9
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	554350.5	554350.5	100.0
Այլ դոտացիաներ			0.0
տեղական վճար	49240	50875.6	103.3
որից՝			
տեղական վճ.՝ծնողական մուծում	16360	18397.5	112.5
տեղական վճ.՝ աղբահանություն	17280	17526	101.4
տեղական վճ.՝ խմելու ջրի վարձավճար	5630	6614.7	117.5
այլ տեղական վճար	9970	8337.4	83.6
Պետական տուրք	2175	3507.5	161.3
Այլ եկամուտներ	21259.8	391.2	1.8
Ընդամենը	*733960.8*	*744098.8*	*101.4*
Ընդամենը սեփական եկամուտ	*179610.3*	*189748.3*	*105.6*

Ծախսային մաս	Նախատեսված /3-րդ եռամսյակ/	Կատարողական /3-րդ եռամսյակ/	Կատ. տոկոս
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	132111	132111	100.0
Պարգևատրումներ	20041.2	20041.2	100.0
Էներգետիկ ծառայություններ	18016.9	18016.9	100.0
Կոմունալ ծառայություններ	60441.9	60441.9	100.0
Կապի ծառայություններ	1040.1	1040.1	100.0
Ապահովագրական ծախսեր	321	321	100.0
Գործողումների և շրջագայությունների ծախսեր	859	859	100.0
Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում	9652.2	9652.2	100.0
Մասնագիտական ծառայություններ	6341.5	6341.5	100.0
Ընթացիկ նորոգում և պահպանում	1022.2	1022.2	100.0
Նյութեր	7473.9	7473.9	100.0
Դրամաշնորհներ	10237	10237	100.0
Սուբսիդիաներ	364218.9	364218.9	100.0
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ*	1650	1650	100.0
Այլ ծախսեր**	1538.2	1538.2	100.0
Շենքերի և շինություններ կապիտալ վերանորոգում, շինարարություն	310359.6	310359.6	100.0
Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ	11270.7	11270.7	100.0
Այլ հիմնական միջոցներ	5680	5680	100.0
Հողի իրացումից մուտքեր	-77675.9	-212749	273.9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հոկտեմբերի 2026 թվականի N 127-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով, 81-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 2.5656 հա այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-042-0158-0127, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 13052026-10-0008) մրցութային կարգով տրամադրել վարձակալության:

2. Սույն որոշման առաջին կետում նշված հողամասի տարեկան վարձակալության մեկնարկային գինը սահմանել 32250 (երեսուներկու հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որը կազմում է տվյալ հողամասի զուտ եկամտի 500%-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ
ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր
2026 թ. հոկտեմբերի 09
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2026 թվականի N 128-Ա

ՄԵԼԱՆՅԱ ԱՐԳԱՄԻ ԴՈՎԼԱԹՅԱՆԻՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մելանյա Արգամի Դովլաթյանին շնորհել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի պատվավոր քաղաքացու կոչում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ
ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ
ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 09
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2026 թվականի N 129-Ա

ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշել՝ 2026 թվականի նոյեմբերի 3-ը, ժամը՝ 18:15, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱՐՅԱՆ
ՇՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ
ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 09
ք. Եղեգնաձոր